ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ 30 ՏԱՐԻՆ

Իր երեսնամյակը բոլորեց ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի «Պատմա-բանասիրական հանդեսը»՝ ՍՍՀՄ-ում և նրա սահմաններից դուրս լայն ճանաչման արժանացած հայագիտական ու հասարակագիտական պարբերականը.

Մոտ երկու հարյուր տարվա վաղեմություն ունեցող հայ պարբերականների թիվն անցնում է 3.000-ից։ Դեռևս XIX դ. սկզբին հայ իրականության մեջ հայտնվեցին գիտահանրամատչելի բովանդակություն ունեցող պարբերականների նախօրինակները, իսկ հետագայում, հասարակական մտքի զարգացման համեմատ, ինչպես Անդրկովկասում, այնպես էլ Ռուսաստանում, Եվրոպայում, Թուրքիայում, Հնդկաստանում, Ամերիկայում, Մերձավոր ու Միջին արևելքի երկրներում հրատարակվեցին բազմաթիվ հայերեն գիտամշակութային և գիտական հանդեսներ ու պարբերաթերթեր։ Սովետական իշխանության տարիներին հայագիտական մտքի հարստացմանը նպաստեցին «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», «Գիտական տեղեկագիր», «Նորք», ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.) և այլ պարբերականներ։ Այս հրատարակությունները դարձան մեր ժամանակներում հասարակական գիտությունների հետազոտությունների զարգացման նշանակալի խթան։ Այդ պարբերականները միաժամանակ ի հայտ բերեցին հայագիտական արդիական նվաճումներն ընդհանրացնող և դրանք պրոպագանդող նոր պարբերականի երևան գալու անհրաժեշտությունը։ Այդպիսի խոշոր հրատարակության պահանջը թելադրված էր Սովետական Հայաստանում հասարակական գիտությունների, մասնավորապես հայագիտության և նրա առանձին ճյուղերի զարգացման, նոր ուղղությունների ու պրոբլեմների մշակման, հայագիտության միջազգային շրջանակների ընդլայնման անհրաժեշտությամբ։ Այդպիսի հրատարակություն դարձավ «Պատմա-բանասիրական հանդեսը», որը սկսեց լույս տեսնել 1958 թվականից։

Նոր հրատարակվող հանդեսն իր առջև նպատակ էր դնում լուսաբանել պատմագիտության, գրականագիտության, լեզվաբանության, արվեստագիտության, փիլիսոփայության և ընդհանրապես հայագիտության հարցերը, տեսական հետազոտությունները համադրել գիտական-գործնական կարևոր պրոբլեմներին և նպաստել դրանց լուծմանը։ Այս, ինչպես և դրանց աղերսվող՝ Սովետական Միության և արտասահմանյան շատ երկրների ժողովուրդների հետ հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական, մշակութային-հոգևոր կապերի ու հարաբերությունների պատմության վերհանման խնդիրը հանդեսը հաջողությամբ իրականացնում է գիտական հասարակայնության հետ իր առաջին հանդիպումներից ի վեր։

Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին դեռևս 1960 թ. «Պատմա-բանասիրական հանդեսը» գնահատում էր որպես «ակադեմիական շատ լուրջ պարբերական», որի ասպարեզ իջնելը պայմանավորվում էր հասարակական անհրաժեշտ նախադրյալներով։ «Բնութագրական է,— գրում էր նա,— որ անցյալի իրողությունների նկատմամբ սրվող հետաքրքրությունը ի հայտ է գալիս առաջընթացի ամենաինտենսիվ ժամանակներում։ Ստեղծելով իր ապագան և ներկան, ժողովուրդը ձգտում է արժեքավորել իր անցած ուղին, և թափով զարգացող ինքնագիտակցությունն անխուսափելիորեն խթանում է սրված հետաքրքրությունն անցյալի դարաշրջանների հանդեպ»։

«Պատմա-բանասիրական հանդեսը» ներկայացավ հայագիտական հրատարակությունների մեջ աչքի ընկնող բազմակողմանիորեն հարուստ ծրագրով։ Այն ներառում է հայ ժողովրդի դարավոր պատմության հին, միջնադարյան,

նոր և նորագույն շրջաններ՝ աղբյուրագիտական, վիմագրական, հնագիտական և ազգագրական ուսումնասիրությունների ամենալայն ընդգրկումներով։ Նրա բանասիրական մասը բովանդակում է քաղաքակրթության զարգացման մեջ հայ ժողովրդի ապրած նույն ընդգրկուն ժամանակաշրջանը՝ գրականագիտական ու լեզվաբանական համապատասխան թեմատիկայով։ Պարբերականի հասարակագիտական մյուս բաժիններն ընդգրկում են փիլիսոփայությունը, իրավունքի պատմությունը, արվեստն ու ճարտարապետությունը և դրանց հետ կապվող հարակից պրոբլեմները։ Այսպիսի մեծ և բարդ ծրագրի իրականացման շնորհիվ, բացի հայագիտական մտքի զարգացմանը բերած անմիջական նպաստից, հանդեսը տասնամյակներ շարունակ նպաստում է Սովետական Հայաստանի, ՍՍՀՄ մյուս հանրապետությունների, ինչպես և արտասահմանի գիտական հասարակայնության հետ մտավոր կապերի ամրապնդմանն ու ընդլայնմանը։ Մասնավորապես, դժվար է գերագնահատել նրա դերը տարբեր երկրներում հայագիտության մշակներին, սփյուռքահայ ընթերցողին Սովետական Հայաստանում զարգացող հայագիտության նվաճումներին ծանոթացնելու և հաղորդակցելու գործում։ Դրա հետ միասին «Պատմա-բանասիրական հանդեսը» սովետական ընթերցողին մշտական նյութ է տրամադրում հայագիտական կենտրոնների գործունեության, դրանց գիտահետազոտական աշխատանքների վերաբերյալ։ Հայրենական և արտասահմանյան գիտական մտքի այսպիսի համադրումն իրականացվեց հետևողական գործունեության շնորհիվ։ Հանդեսը կարողացավ իր շուրջը համախմբել առաջատար հայագետներին, ընդլայնվեց նրա տարածման աշխարհագրությունը։ Այն ընթերցում են Հայաստանում, Անդրկովկասի մյուս հանրապետություններում, Հյուսիսային Կովկասում և Ուկրաինայում, Մոսկվայում, Լենինգրադում և այլուր։ Շարունակ ընդլայնվում են ընթերցողի շրջաններն արտասահմանում՝ Ֆրանսիայում, Չեխոսլովակիայում, Բուլգարիայում, Իտալիայում, Ռումինիայում, Լեհաստանում, Անգլիայում, ԳԴՀ-ում, Հունգարիայում, Սիրիայում, Լիբանանում, ԱՄՆ-ում, Արգենտինայում, Կանադայում և այլ երկրներում։ «Պատմա-բանասիրական հանդեսը» նպատակասլաց հոն է տալիս արտասահմանում հայագիտական հետազոտությունների նկատմամբ ավանդականորեն դրսևորվող հետաքրքրությանը։ Այն մտավոր-մշակութային լիցք է ներարկում հայկական սփյուռքին, նրան առնչում հայրենիքի գիտական ու հասարակական իրողություններին և ներգրավում հայագիտական մտքի անդաստան։

Սովետական և միջազգային գիտական շրջաններում «Պատմա-բանասիրական հանդեսի» ճանաչման գործում մեծ երախտիք ունի անվանի պատմաբան, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանը, որը հանդեսի հիմնադիրն ու անփոփոխ գլխավոր խմբագիրն է։

Պարբերականը հայագիտական հրատարակության նոր ու արդիական որակ է նաև այն բանի շնորհիվ, որ նրան աշխատակցում են բազմաթիվ նշանավոր հայրենի գիտնականներ ու մշակույթի գործիչներ։ Նրա էջերում տպագրվել են ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ Վ. Համբարձումյանի, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ և թղթակից անդամներ Դ. Դեմիրճյանի, Մ. Սարյանի, Է. Աղայանի, Բ. Առաքելյանի, Ս. Արևշատյանի, Գ. Բրուտյանի, Գ. Գալոյանի, Ս. Երեմյանի, Լ. Խաչիկյանի, Աշ. Հովհաննիսյանի, Ա. Ղարիբյանի, Կ. Մելիք-Օհանջանյանի, Վ. Նալբանդյանի, Մ. Ներսիսյանի, Բ. Պիոտրովսկու, Գ. Ջահուկյանի, Է. Ջըրբաշյանի, Գ. Սարգսյանի, Գ. Սևակի և ուրիշների հոդվածներն ու ուսումնասիրությունները։ Հանդեսին պարբերաբար աշխատակցում են հայագիտական ամենատարբեր պրոբլեմներով զբաղվող գիտության բազմաթիվ առաջատար մասնագետներ։ Նրանց հետ պարբերականի էջերում հանդես են գալիս մյուս հանրապետություններում գործող գիտնականները, որոնց գիտական հետաքրքրությունները տարածվում են հայագիտական, կովկասագիտական և արևելագիտական պրոբլեմների, ռուս, ուկրաինական և այլ ժողովուրդների հետ հայ ժողովրդի պատմական, քաղաքական, սոցիալական, նրանց մշակութային առնչությունների պատմության հարցերի վրա։ Այդ հեղինակներից են Ի. Կրիպյակևիչը, Յա. Դաշկևիչը (Լվով), Տ. Իզմայլովան, Կ. Յուզբաշյանը, Ի. Աբու-

լաձեն, Դ. Զխիկիշվիլին (Թբիլիսի), Ա. Տերեշչենկոն (Դոնի Ռոստով), Ն. Ռաշբան, Ս. Սվերբուխը (Խարկով), Ա. Զինչենկոն (Վիննիցա) և շատ ուրիշներ։

«Պատմա-բանասիրական հանդեսը» տպագրել է արտասահմանյան պատմաբանների ու բանասերների, հայ միջնադարյան մշակույթի պատմության մասնագետների բազմաթիվ ուսումնասիրություններ։ Այդ ստվար խմբի մեջ են մտնում այնպիսի հետազոտողներ, ինչպես Ֆ. Ֆեյդին, Ժ.-Պ. Մահեն, Ս. Տեր-Ներսեսյանը (Փարիզ), Ա. Ալպագո-Նովելլոն (Միլան), Պ. Կունեոն (Հռոմ), Է. Շյուցը, Ժ. Տրոշանին (Բուդապեշտ), Հ. Էրիկը (Չիկագո), Վ. Բընըցյանուն, Հ. Սիրունին (Բուխարեստ), Լևոն Մեսրոպը (Փարիզ), Լ. Մոտալովան (Պրագա), Բ. Էռնեստը (Բրյուսել), Բ. Լինոսը (Աթենք), Ջ. Գրեպինը (Ֆլորիդա), Հ.-Վ. Պոլը (Ջյոլն), Ս. Մայքլը (Հոլանդիա), Ռ. Թոմսոնը, Ռ. Հովհաննիսյանը (ԱՄՆ) և ուրիշներ։ Հանդեսին աշխատակցող գիտնականների այս ոչ լրիվ ցանկն ինքնին վկայում է, որ աննախընթաց վերելք է ապրում արդիական հայագիտական միտքը, և որի լրջմիտ ու նրբաճաշակ հյուրընկալը «Պատմա-բանասիրական հանդեսն» է։

Պետք է արժանին հատուցել հանդեսի գիտակազմակերպչական նշանակությանը՝ վեր բարձրացող գիտական միտքն ու մտածողությունը խրախուսելու գործում։ Հայագետների մի քանի սերունդներ իրենց ինքնահաստատումն են գտել «Պատմա-բանասիրական հանդեսում», որն այսօր էլ շարունակում է ձևավորել և նպատակասլաց ուղղություն տալ երիտասարդ հայագետների գիտական գործունեությանը։

Ունենալով հայագիտական թեքում, պարբերականը ամենատարբեր ժամանակներում գիտական զարգացմանը համընթաց՝ արժեքավորել կամ նորովի է լուսաբանել հայ ժողովրդի պատմագիտական, բանասիրական, փիլիսոփայական մտքի, մշակույթի և արվեստի բնագավառի բազմաթիվ հարցեր։ Հանդեսի բովանդակության հետևյալ խորագիրը կրող կայուն բաժինները՝ «Հոդվածներ», «Հաղորդումներ», «Հրապարակումներ», «Բանավեճ», «Պատմա-մշակութային ակնարկներ», «Սփյուռքահայ կյանք», «Լրատու», «Մեր հոբելյարները», «Գրախոսություն», «Գիտական ինֆորմացիա»՝ պարբերականին հնարավորություն են ընձեռել լայն, սակայն միատարր ընդգրկում ունենալ։ Բազմազան նյութերի ամբողջության մեջ աչքի են ընկնում պատմագիտության, բանասիրության, պատմամշակութային կապերի և այս կտրվածքով՝ կովկասագիտության և արևելագիտության հանգուցային խնդիրների արդիական մեկնաբանությունն ու գնահատականը։ Դա իրականացվում է արխիվային ու փաստավավերագրական հարուստ և բազմաձալ նյութի, հայագիտության անցյալի նվաճումների, ականավոր հայագետների անտիպ գործերի ու նամակների հիման վրա, ընդսմին, ըստ ամենայնի օգտագործելով գիտական հրապարակումների ժանրը։ Այս կերպ հանդեսի շնորհիվ մոռացությունից փրկվել և գիտական հասարակայնությանն են ներկայացվել Կոմիտասի, Յո. Մարկվարտի, Ն. Ադոնցի, Հ. Աճառյանի, Ստ. Նազարյանցի, Ղ. Աղայանի, Հովհ. Հովհաննիսյանի, Հովհ. Թումանյանի, Ե. Չարենցի անտիպ նամակները և գրագրությունները։

Հանդեսը հետազոտական լայն հուն է բացել նաև ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական ընտանիքում անկասելի զարգացում ապրող հայ ժողովրդի մտավոր և գիտամշակութային կյանքի ուսումնասիրման ուղղությամբ։ Նրա էջերում բազմաթիվ նյութեր են տպագրվել նաև Հայաստանում սովետական իշխանության ակունքների մոտ կանգնած լենինյան գործիչների, կուսակցական կազմակերպությունների ու դրանց գործունեության մասին։ Տարբեր ժանրերով հրապարակումներում բնութագրական կողմերով են բացահայտված հանրապետությունում սոցիալիստական և մշակութային շինարարության, Հայրենական պատերազմում հայ ժողովրդի մասնակցության և այլ հարցեր։

Հանդեսը ծանրակշիռ ավանդ ունի հայագիտության միջազգայնացման հետագա խորացման մեջ, որ ներթափանցված է ժողովուրդների ինտերնացիոնալ բարեկամության, դրա պատմական ու ավանդական արժեքների լուսաբանման ոգով։ Գիտական թեմատիկայի մեջ առաջատար նշանակություն ու-

նեն մասնավորապես հայ-ռուսական հարաբերությունները, դրանց ձևավորման ու ծավալման ընթացքը բացահայտող նյութերը, որոնք կապված են հայ ժողովրդի պատմության ուղենշային պրոբլեմների հետ։ Ուշագրավ են հատկապես այն հրապարակումները, որոնք վերաբերում են XVII—XIX դդ. հայ-ռուսական սոցիալ-տնտեսական ու հասարակական հարաբերություններին։ Պատմագիտական այլևայլ տեսանկյուններից, որ ընդհանրանում են հայերի և նրանց առնչված ժողովուրդների տնտեսական-քաղաքական ու հոգևոր հարաբերությունների պատմական դրվագների հանդամանալի ուսումնասիրությամբ, քննության են ենթարկվում կոնկրետ փաստեր, իրողություններ, պրոբլեմներ։ Շարունակ արծարծվող և իր հրատապությամբ առանձնանշվող թեմաներից է հայ-վրացական, հայ-ադրբեջանական և հայ-ուկրաինական պատմական դարավոր հարաբերությունների պատմությունը, որի բազմակողմանի արժեքավորումն իրականացվում է գիտնականների համատեղ ջանքերով։

Հայագիտական հանդեսի հոդվածների, ուսումնասիրությունների, հրապարակումների և այլ բովանդակության նյութերի առանցքն են կազմում այնպիսի հարցեր, ինչպես հայ ժողովրդի ծագումն ու կազմավորումը, հայ պետականության սկիզբն ու հետագա ընթացքը, անկումը՝ պատմական որոշակի պայմաններում, երկրի սոցիալ-տնտեսական կյանքն ու հասարակական կառուցվածքը, հայ ժողովրդի ազատագրական պայքարն ու նրա գաղափարախոսությունը և այլն։ Պարբերականը գիտական ուղղություններն ու պրոբլեմները դիտում է ժամանակակից հասարակական գիտությունների զարգացման մեկնակետից՝ ազգային պետության, հայ մշակույթի, գրի և դպրության, արվեստի ու ճարտարապետության, իրավունքի, փիլիսոփայական մտքի և այլնի զարգացումը կապակցելով քաղաքակրթության ընդհանուր ընթացքին։ Ակնառու ներդրում են հայ գաղթավայրերի և դրանց հասարակական ու մշակութային կյանքի պատմությանը նվիրված ուսումնասիրությունները՝ խարսխված աղբյուրագիտական ու պատմագիտական հարուստ ու բազմաշերտ հենքի վրա։ Դրանք նպաստում են նաև այլ ժողովուրդների հետ հայ ժողովրդի պատմականորեն ծավալված երկխոսության հանգամանալի ուսումնասիրությանը։ Մեկնելով պատմական ու գիտական ճշմարտացիության սկզբունքներից, հանդեսը հետևողականորեն հակադրվում է հայ ժողովրդի պատմությունը նենգափոխելուն ուղղված՝ պատմության թուրք կեղծարարների և նրանց բուրժուական այլ ձայնարկուների հակագիտական փորձերին։ Այս բնույթի հրապարակումներն աչքի են ընկնում արդիական նպատակասլացությամբ և նպաստում են ամբողջական պատկերացում կազմելու պատմության թուրքական նենգափոխողների նպատակների մասին։

Հանդեսի հայագիտական արժեքը մի հայտնի չափով կարելի է գնահատել նաև նրա բնագրային հարուստ հրապարակումներով։ Այս իմաստով առանձնանում են նրա աղբյուրագիտական նյութերը, որոնք ներկայացնում են հայ հին և միջնադարյան ու նոր շրջանները։ Տարբեր տարիներին հրապարակված փաստաթղթերը, վավերագրական նյութերը, ձեռագրերը և այլն շատ հաճախ դուրս են գալիս զուտ հայկական շրջանակներից. դրանց հիման վրա արված ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս վերստին, բայց նոր կողմերով ու առավել ամբողջական եզրակացություններով ներկայացնել հայագիտության միջազգային արժեքը։ Այս տեսակետից հանդեսը պատկառելի ներդրում ունի արևելագիտական, կովկասագիտական և բյուզանդագիտական ուսումնասիրությունների խորացման ասպարեզում։

Տեսական-հետազոտական ընդգրկումների նույնպիսի լայն սահմաններով է բնութագրվում «Պատմա-բանասիրական հանդեսի» գիտական հետաքրքրությունը հայ արվեստի և ճարտարապետության նկատմամբ։ Ըստ էության, դա արտահայտում է ժամանակակից գիտական մտքի վերաբերմունքն ու կողմնորոշումը հայ արվեստի ու ճարտարապետության ուսումնասիրության հանդեպ՝ սկսած նրանց զարգացման վաղնջական ժամանակներից մինչև նոր շրջանը։ Այս ուղղությունները ներկայացնող հոդվածներն ու ուսումնասիրությունները բազմաթիվ նոր կողմերից են բացահայտում հայ արվեստի և ճարտարապետու-

թյան թողած ու կրած ազդեցությունները՝ իրենց կոնկրետ դրսևորման ձևերի մեջ (մանրանկարչություն, կառուցողական արվեստ և շինարարական տեխնիկա, դեկորատիվ արվեստ, կերպարվեստ, երաժշտություն և այլն)։

Հայագիտական պրոբլեմների նկատմամբ «Պատմա-բանասիրական հանդեսի» գիտական ու քաղաքացիական դիրքորոշումը հետևողականորեն ի հայտ է գալիս «Գրախոսություն» բաժնում, որտեղ արժեքավորվում է նոր հրատարակված համապատասխան գրականությունը։ Այս ժանրում առանձնապես նկատելի է հայրենական և արտասահմանյան գիտնականների համագործակցությունը։ Հոդվածների, հրապարակումների, հաղորդումների հետ միասին գրախոսության բաժնում ձևավորվում ու դրսևորվում է սկզբնաղբյուրների, փաստավավերագրական նյութի գիտական շրջանառության և հայագիտական հին ու նոր տեսությունների նկատմամբ արդի հայագիտության վերաբերմունքը։

Պարբերականի տարաբնույթ և բազմաշերտ ինֆորմացիոն նյութը ներկայացվում է ժանրային որոշակի առանձնահատկություններով։ Հրապարակումների բաժնում տպագրվում են հայագիտական բովանդակության բնագրեր, անմիջական պրոբլեմ առաջադրող կամ նրա վերլուծությունը ներկայացնող նյութեր, սկզբնաղբյուրներ՝ համապատասխան լուսաբանությամբ կամ առանց դրա։ Այդպիսիք այս կամ այն չափով սերտաճում են գիտական ինֆորմացիայի բաժնին, որի սեղմ մատուցումը, ի դեպ, փոխհատուցվում է հայագիտական բազմակողմանի ընդգրկումներով։ Նշված խորագրի ներքո տպագրվում են տեղեկություններ՝ հայերեն, ՍՍՀՄ և արտասահմանի ժողովուրդների լեզուներով լույս տեսած հայագիտական գրականության մասին, պատմաբանասիրական գրականությանը վերաբերող փաստեր, իրողություններ և այլն։ Տպագրվում են նորույթներ հայագիտական, արևելագիտական և բյուզանդագիտական համաժողովների, նստաշրջանների, ինչպես և նոր հրատարակությունների մասին։ Հանգամանալի տեղեկություններ են տրվում սփյուռքահայ մշակութային կյանքի վերաբերյալ։

Հանդեսում քննվող պրոբլեմների ու առաջադրվող լուծումների արդյունավետության և դրանց ինքնահաստատման կարևոր միջոցներից է բանավեճը։ Այս բաժնի հրապարակումները, որպես կանոն, վերաբերում են կարևոր պրոբլեմների՝ սկսած հայ բարբառների ծագման ու զարգացման հարցից մինչև փիլիսոփայական մտքի պատմության պրոբլեմների մեկնաբանությունը։ Նկատելի է պարբերականի միտումը՝ ընդլայնել նաև բանավիճային թեմատիկան ու նրա մասնակիցների շրջանակը։

1983 թ. հայերեն և ռուսերեն լեզուներով լույս տեսավ «Պատմա-բանասիրական հանդեսի» մատենագիտական ցանկը, որ պարունակում է նրա հրատարակած քսանհինգ տարվա նյութերը։ Ցանկի հրապարակումների քանակը (2828 միավոր) ներկայացնում է հայագիտական և նրան առնչվող այլ գիտական բնագավառներին վերաբերող ուսումնասիրությունների պատկառելի ամբողջություն, որն ուրվագծում է քառորդ դարի ընթացքում խնդրո առարկա գիտությունների զարգացման ուղղություններն ու գիտահետազոտական պրոցեսի ընթացքը։

Հանդեսի գիտական ու հասարակական արժեքը, նրա բովանդակության հրատապությունը դրսևորվում է ընթերցողի հետ ունեցած փոխադարձ կապի մեջ։ Տասնյակ տարիների ընթացքում հետզհետե ընդլայնվել և այսօր բազմակողմանի շփումներ են ստեղծվել պարբերականի ու նրա հայրենական և արտասահմանյան ընթերցողների միջև։ Ընթերցողները խմբագրությանն են հայտնում իրենց գիտական հետաքրքրությունների, ցանկությունների և տպավորությունների մասին, իսկ սփյուռքի ընթերցողները՝ նաև իրենց հպարտությունը հայրենիքում միջազգային չափանիշներով բնութագրվող հայագիտական հանդեսի գործունեության, նրա հեղինակության համար։ «Շնորհակալ եմ ինձ ուղարկված հանդեսի համար, որի խմբագրությանը ջերմորեն շնորհավորում եմ։ Նա իսկույն գտավ իր ճանապարհը»,— գրում էր արևելագետ Վ. Մինորսկին պարբերականի ասպարեզ իջնելու ժամանակ։ Դեպի միջազգային գի-

տական հասարակայնություն տանող այդ վերընթաց ճանապարհի մասին է վկայում նաև խմբագրության հետագա տարիների փոստը։ Արտասահմանի հայագետներից Հ.-Վ. Պոլն առաջարկելով իր աշխատակցությունը, գրում է. «Տարիներ շարունակ ստանում եմ Ձեր հանդեսը, որի համար հայտնում եմ իմ խորին երախտագիտությունը և մասնավոր շնորհակալությունը։ Հանդեսի հայագիտական հոդվածները ճոխացնում են իմ գիտելիքների պաշարը»։ «Այդպիսի հանդեսի մը հարատև երևույթը մայր երկրի մեջ ինքնին բացահայտրայլ է, թե ինչպիսի գուրգուրանքով Հայաստանը՝ վերածնված պետականություն, իր կողքին ունենալով Խ. Միությունը, կաշխատի մոռացության տրված հայության արժեքները և արժանիքները ներկայացնել աշխարհին»,— հայտնում է Հ. Զախսուրյանը (Նյու Յորք)։ Նույն տպավորությունն է բաժանում Ս. Փաշաճյանը (Սոֆիա). «Այսօրինակ մանրազնին և խոր ուսումնասիրությամբ շարադասված սքանչելի հանդեսը միայն ու միայն պետականացած ժողովուրդներու գործ է։ Մենք անցյալում նմանօրինակ հանդես չենք ունեցել ոչ Հայաստանում, ոչ էլ արտասահմանում»,— գրում է նա։

Հանդեսը իր 30-ամյա գործունեությամբ խթանել է գիտական միտքը, մեծապես նպաստել մեզանում հասարակական գիտությունների զարգացմանը։ Դրվատելի է հատկապես այն, որ նրան հաջողվել է երկար ու ձիգ տարիների ընթացքում պահպանել գիտական բարձր մակարդակը։

Հայագիտության զարգացման արդի ժամանակաշրջանն իր նոր և հասունացած պահանջներն է առաջադրում, որը պայմանավորված է նրա ոչ միայն դեռևս չբացահայտված ծալքերի ուսումնասիրությամբ, այլև մեր երկրում տնտեսական ու հասարակական կյանքի, գիտության վերակառուցման անհրաժեշտությամբ։ «Պատմա-բանասիրական հանդեսի» երեսնամյա ավանդույթները երաշխիք են այն բանի, որ առաջիկայում ևս այն իր խոշոր ավանդը կներդնի գիտության զարգացման մեջ։

ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ
ՀՍՍՀ ԴԱ թղթակից անդամ

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ
պատմական գիտությունների դոկտոր